

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусака“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՅԻՆԻՒՆ

Քաղաքական մտածողները:— Ներքին տե-
սուծիւն: Կովկասեան համալսարան: Նամակ
Հին-Նախնական: Նամակ խմբագրին: Ներքին
լուրեր: Արտաքին տեսուծիւն: Վասպու-
րական: Թիւրքիա:— Մշակիչ հեռագիրներ:— Յայ-
տարարութիւններ:— Բանասիրական: Հայոց
ուսումնարանների նախագիծ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՍՈՒՆԵՐ

Թիւրքիան, ինչպէս հաղորդում
են լրագիրները, տեսնելով որ եւ-
րոպական պետութիւնները միա-
ձայն են գործում արեւելեան խնդ-
րի վերաբերութեամբ, կամենում
է այժմ այդ բոլոր պետութիւն-
ներից անջատել մի պետութիւն,
այն է Գերմանիային: Նա զիմել
է Գերմանիային, ինչդրելով որ գեր-
մանական կառավարութիւնը ու-
ղարկի Կ. Պոլիս փորձված ֆի-
նանսիստներին, Թիւրքիայի ֆի-
նանսները կարգի բերելու համար
և նոյնպէս զինուորական պաշտո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹԵԱՆ ՄԻ ՆԱԽԱԳԻԾ

Մեր ամբողջ հայոց ազգը բաժանում է երեք
գլխաւոր դասակարգի, այսինքն՝ երկրագործաց,
արհեստավորաց և վաճառականաց դասակարգերը:
Այս երեք դասակարգերից առաջինը համարվում է
ամենաբազմաթիւնը և ամենաշքեղը, իսկ միւս
երկու դասակարգերը թեպէտ թուով աւելի քիչ են,
բայց աւելի հարուստ: Առաջին դասակարգի պատ-
կանողներն են մեր գիւղացիք, իսկ միւս երկու
դասակարգերի պատկանողներն են մեր քաղաքա-
ցիք: Սորանից հետևանում ենք, որ բոլոր մեր
ուսումնարանների ուսանողներն և ուսանողուհի-
ներն են գլխաւորապէս երկրագործաց, արհեստա-
ւորաց և վաճառականաց զաւակներ: Այժմ տեսնե՞ք
հայ երկսեռ ուսանողները եթէ մեր այժմեան չորս
կարգի ուսումնարանների պրոգրամայի համաձայն
էրը և իցէ իրանց ուսումը աւարտեն և ուսումնա-
րաններից դուրս գան, արդեօք նրանց որ դասա-
կարգի համար պատրաստ կարող ենք համարել և
կամ նոքա կարող են կազմել երկրագործաց, ար-
հեստավորաց կամ վաճառականաց համար մի տե-
սակ թիւքով: Ըստ մեր դատման ոչ. որովհետեւ
հայ ուսանողը մեր ուսումնարաններից ոչ մինի
մէջ չէ սովորում ոչ երկրագործութիւն, ոչ ար-
հեստ և ոչ էլ վաճառականութիւն: Եւ դորա հա-
մար չէ միթէ որ մեր հայ ուսանողը չատ անգամ
ստիպված թողնում է երկրագործաց, ար-
հեստավորաց և վաճառականաց դասակարգերը,
որոնցից մինին անշուշտ ինքն էլ է պատկանում,
և սկսում է որոնել ուրիշ դասակարգի մարդիկ
և ուրիշ գործունէութեան ասպարէզներ, ինչպէս
օրինակ ուսուցչութիւն, քահանայութիւն և երբեմն
էլ ընտրում է աստիճանաւորաց ասպարէզը: Այս
երեք դասակարգի մարդկանց խմբերի մէջ խառն-
վելով մեր հայ ուսանողը, բնականաբար խորթ-
վում է իր ծնողաց տանից, նոցա գործունէութեան

նեաներին, զորքը վերանորոգելու
համար:

Գերմանիան համաձայնել է
այդ առաջարկութեան հետ և ու-
ղարկել է մի ֆինանսական պաշ-
տոնեային, նոյնպէս թոյլ է տուել
որ ցանկացողները գերմանացի գե-
նուորականներից ուղևորվեն դէպի
Թիւրքիա:

Բ. Դուռը, իր խելքով, դրա-
նով կարծում է հասնել իր մտա-
դրած նպատակին, կարծում է դը-
րանով Գերմանիային եւրոպական
պետութիւնների հետ ընդհանուր
գործակցութեանց անջատել կարո-
ղանալու:

Եւրոպական հասարակական
կարծիքը և պարլամենտները ու-
ղարկութիւն դարձրին Թիւրքիայի
քաղաքականութեան այդ նոր
փորձերի վրա: Մեղքական պար-
լամենտում այդ մասին հարցում-
ներ եղան: Բայց Ղազստոնի մի-
նիստրութիւնը հանգստացրեց հա-
սարակական կարծիքը, յայտնելով,

ասպարէզից: Ուրեմն, այսպիսով մեր ուսումնա-
րանները նպատակում են բաժանելու հարազատ
որդուն իր հօրից, հարազատ աղջկան իր մօրից...
Այս կերպ բաժանվելով է, որ մեր երկրագործը,
արհեստավորը և վաճառականը հետզհետէ կարող
են զրկվել իրանց միջի թարմ և զօրեղ ոյժերից
այնպիսի, որ նոյն իսկ ամեն մի դասակարգը կա-
րող է հիմքից խախտվել, այսինքն ժողովրդի մէջ
մտած արդիւնաբերական հոգին հետզհետէ թու-
լանալով կարող է միանգամայն անհետանալ:
Մինչդեռ մեր ուսումնարանները ընդհակառակն
պէտք է պատրաստէին մեծ մասամբ երկրագործ-
ներ, արհեստավորներ և վաճառականներ, աւելի
լաւ աւել, գործնական կեանքի յարմար մարդիկ:
Եթէ այժմեան մեր ուսումնարաններում հայ
երկուսեւ մանկուն կրթվում է այնպէս, որ սա
արհամարհանօք է նայում երկրագործի, արհես-
տավորի և վաճառականի վրա իբրև կոպիտ, ան-
տաշ և տգէտ մարդկանց վրա, ուրեմն մեր կո-
րուստը, համարձակ կարող ենք ասել, շատ հե-
ռու չէ:

Յիրաւի, միթէ նպատակայարմար է, երբ մենք
երկրագործի, արհեստավորի և կամ վաճառականի
մասն ու աղջիկ զաւակներին տարինբով սովո-
րեցնում ենք թէ փարիզը աշխարհի ամենաշքե-
ղեցիկ քաղաքն է, Կիւրոսը, Տիգրանը I-ը, Նապո-
լէոն Բոնապարտը երևելի թագաւորներին են եղած:
Ի՞նչ սերտ յարաբերութիւն կարող է այս ամենը
ունենալ այն ուսանողի ասպարէզ կեանքի հետ,
որի գործունէութիւնը պէտք է լինեն երկրագոր-
ծութեան, արհեստագիտութեան կամ վաճառա-
կանութեան ասպարէզները, որոնց մէջ հայ ուսա-
նողին հարկաւոր է դիտնալ միայն թէ որ տե-
սակ հողը աւելի շատ քանակութեամբ և լաւ տե-
նակով արտադրութիւն, բերքը կարող է ունենալ,
յետոյ այս բերքից ինչ տեսակ կեանքի յարմար
և հարկաւոր արհեստական մթերքներ կարելի է
պատրաստել և ի վերջոյ դիտնալ թէ երբ և որ
տեսակ պատրաստի կամ անպատրաստի մթերքներ
հարկաւոր է տեղափոխել մի քաղաքից միւս քա-
ղաք, ուրիշ երկրներին հարստութիւնը գրաւելու
և ձեռք բերելու համար:

որ Գերմանիան իր մի քանի պաշ-
տոնեաներ թիւրքիա ուղարկելով,
ամենեւին չէ կամենում հեռանալ
եւրոպական պետութիւնների ընդ-
հանուր համաձայնութենից արե-
ւելեան խնդրի վերաբերութեամբ,
բայց թոյլ է տալիս, ինչպէս և
առաջվայ ժամանակները միշտ ա-
րել է, իր հպատակներին մտնել
Թիւրքաց ծառայութիւնը:

Գերմանիան յայտնել է պաշ-
տոնապէս, որ այն գերմանացի
հպատակը, որ գերմանական ար-
քունի ծառայութեան մէջ է գը-
տնվում, երբ ուղևորվում է դէպի
Թիւրքիա, պարտաւորված է լի-
նում հրաժարական տալ իր ծա-
ռայութենից:

Եւր բոլորը ցոյց է տալիս
որքան նեղ դրութեան մէջն է
Թիւրքիան, որ այս տեսակ երե-
խայական միջոցներով կարծում
է քանդել կարողանալու այն քա-
ղաքական ներդաշնակութիւնը, որ
տիրում է այժմ ամբողջ Եւրո-

Այս բոլոր դժբաղդութիւնը, որ մի ամբողջ
սերնդի համար առաջ է դրվաւ, զլխաւորապէս
նորանից է, որ մեր ազգային հոգեւոր ուսումնարան-
ների պրոգրամայի կազմակերպութիւնը բոլորովին
չէ յարմարեցրած մեր ազգի իսկական ուղղու-
թեան և նորա էական կարիքներին: Բայց ո՞վ է
կազմել այդ պրոգրաման. պատասխանը կարճ է
— հայ ուսուցիչը, ընթերցողը: Իսկ թէ ինչու հայ
ուսուցիչը այդպիսի պրոգրամա է կազմել, լսի
հետեւեալը, այն ատեն կը հասկանաւ:

Մեզանից որին չէ պատահած լսել կամ կարդալ
լրագիրներ մէջ թէ այս կամ այն ուսումնարանի
ուսուցիչը հեռացել է և նրա տեղը ուրիշն է վար-
ձվել. յետոյ այս վերջինն էլ, հազիւ մի տարի
պաշտոն վարելուց վերջը նոյն վիճակի է հասել
և այլու: Այսպէս հետզհետէ հայ ուսուցիչը մի
ուսումնարանից միւս ուսումնարան տեղափոխվում
է ականջ տեղափոխվելով, ի վերջոյ միանգամայն
ընդ միշտ զրկում է դաստաստի արուեստից և
թողնելով մեր ուսումնարանը իր համար ուրիշ
գործունէութեան ասպարէզ է ընտրում: Չէ որ
այս ատեն պարզապէս պատահել է ընտրում: Բայց
թողած պաշտոնը ներկայումս կարող է երկար
ժամանակ պարզապէս մնալ, քանի որ մեղանում ինչ-
պէս ամենայն տեղ, սովալլուկներ թիւք քիչ չէ,
որոցմէ մինին քաղցը ստիպում է ընդունել հայ
ուսուցչի պաշտոնը, որին ինքը գուցէ ոչ մի յար-
մարութիւն և արժանաւորութիւն չունի: Աւելի
պարզեւ ասածաւ, երբ մի զմեր ուսումնարաննե-
րում ուսուցչական ասպարէզում որ և է պաշտոն
է ստանում, նա հաստատ մտքով և անխախտելի
կալքով յանձն չէ առնում վարել այդ պաշտոնը,
վասն զի հայ ուսուցիչը բնաւ երբեք նպատակ չէ
դնում իր համար օգուտ քաղել իր պաշտոնից:
ուսումնասիրել մանկավարժական գործը և հարս-
տացնել իր հմտութիւնը դաստիարակութեան գոր-
ծի մէջ, այլ նա ասպարէզ է այն մտքով, որ մի ժա-
մանակաւոր ասպատանարան ունենայ ուսումնա-
րանի մէջ իսկ յետոյ միջոց գտնել ուրիշ գործու-
նէութեան ասպարէզ, ուրիշ աւելի ապահով դը-
րութիւն ձգել իր համար: Ուրեմն մեղանում
ուսումնարանի մէջ գործողը— հայ ուսուցիչը— ու-

պայում արեւելեան խնդրի վերա-
բերութեամբ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍՏԱՆ ՀԱՄԱՂԱՍԱՐԱՆ

«ГЛОСЫ» լրագրի բանասիրական բաժնի
մէջ կարգում ենք հետեւեալ յօդուածը Կով-
կասեան համալսարանի մասին:

Ներկայումս յաճախ խօսվում է Թիւրք-
լիսի համալսարանի մասին: Եւ ճշմարիտ Սի-
րիեան համալսարանից յետոյ Կովկասեանը
ամենաանհրաժեշտն է: Այնտեղ համալսա-
րանը ոչ թէ միայն համապատասխան կը լի-
նի բարձրագոյն ուսման պահանջներին, այլ
մի և նոյն ժամանակ Կովկասեան զինական
հարցերի ծագեցնելուն և մշակմանը կը ծա-
ռայի: Կովկասի մէջ չափազանց հարուստ
նիւթեր կան ոչ թէ միայն բնագիտութեան,
այլ և պատմաբանների և լեզուագիտների
համար: Մեր յարգելի բնագիտ. Կ. Ֆ. Կեսսեր,
վերջացնելով Կովկասեան իր ճանապարհորդու-
թեան նկարագիրը երկրի բարձրագոյն ու-
սումնական հիմնարկութեան ցանկութեամբ,
նկատում է, որ համալսարանը Կովկասի մէջ
որքան կարելի է շուտ պէտք է հիմնել, ու-
րովհետեւ այնպիսի հարցեր կան, մանաւանդ

նի այլ նպատակ՝ նպատակ արտաքին ուսում-
նարանի, իսկ արտաքին ուսումնարանի ասպարէզ
փնտռող և նպատակ ունեցող հայ-ուսուցիչը երբեք
չէ կարող ուսումնարանի բուն շահերի վրա
լուրջ մտածել և ընդունակ լինել կազմել այլ
պրոգրամա քան թէ այն, որով մեր ապագայ
բունդը օրըցօրեք անդգալի կերպով պիտի չեղի
մեր ազգի պատմական ուղղութիւնից: Ուրիշ քան
կը լինէր եթէ հայ ուսուցչի նիւթական պայման-
ները այնպէս լինէին, որ ուսուցչական պաշտոնը
յանձն առնելով, դասատուն վստահ լինէր որ 20
— 25 տարի դաստիարակողի ծանր պաշտոնը վա-
րկելով, իր ծերութեան ժամանակ նա չի մնայ ա-
ռանց մի կտոր հացի, առանց հասցնել իր մատու-
ցած բազմամեայ ծառայութեան համար: Իսկ եթէ
այսպէս լինէին դասատուի պայմանները, այն ժա-
մանակ դասատուի ասպարէզը կը մոռնէին այնպի-
սի ընդունակ մարդիկ, որոնց տուած ուղղութիւնը
և պրոգրաման կը լինէր բոլորովին այլ, քան թէ
հիմնականը: Բայց ցաւալին այս է, որ մեղանում ոչ
ոք չէ մտածում, թէ ինչպէս կարելի է ապահո-
վացնել հայ-ուսուցչի ներկայ և ապագան, երբ
նա գործել է անխնայ 20—25 տարի: Այս ապե-
րախտութիւն չէ դէպի ազգային գործիչները, երբ
այդ մասին ոչ մէկը չէ մտածում...

Բոլոր վերեւ խօսածներից զալիս ենք այն եզրա-
կացութեան, որ մեր ուսումնարանների գոյութեան
հիմքը կանգնած է երկու էական կէտերի վրա—
տնտեսական և ուսումնական, որոնցից երկուսն
էլ գտնվում են այնչափ խանգարված ու խախտու
դրութեան մէջ, որ ամենահարկաւոր է նրանց ան-
յայաղ կազմակերպութիւնը, որի մասին ահա
սկսում ենք:

Այս սկզբունքը, որից մենք առաջ կը դանք,
կայանում է նորանում, որ բոլոր Բուսատառնի
մեր ազգային, հոգեւոր ուսումնարանների տնտեսա-
կան և ուսումնական վարչութիւնը հարկաւոր է
կենտրոնացնել այնպիսի մի հիմնարկութեան
մէջ, որը լինելով օրէնսդրել և ուղեցող բոլոր
ուսումնարաններին, կարող լինի ներթափել մեր
ուսումնարանները մի որոշ կանոնի և հաստատուն
ընթացքի: Եւ այդպիսի հիմնարկութեան չնորմա-

Հնութիւններին վերաբերող, որոնց լուծելը քանի յետաձգվի, այնքան դժուար կը լինի։ Լրագիրներին տեղեկութիւններին համեմատ կովկասեան համալսարանի բացման համար, բայց հողից, որ Թիֆլիսը ձգտեալ է տալիս, 160,000 պատրաստի գումար կայ, որից 100,000 ռ. Թիֆլիսէն նուիրելի, 40,000 Քու-թայիսի կալուածական բանկը և 20,000 Քու-թայիսի քաղաքը։ Այդ նուիրատուութիւնները արկած են կամաւորապէս և երկրի համար ամենադժուար ժամանակ։ Թէպէտ 160,000 ռ. գումարը բաւական անշնան է, եթէ հա-մեմատենք հարկաւոր եղած ծախսերի գու-մարի հետ, բայց որովհետեւ միւս քաղաքներն էլ անտարբեր չեն մնայ դէպի կովկասեան համալսարանը, բայց այդ համալսարանի հա-մար կարելի կը լինի ծախսել այն գումարները, որոնք զործ են ածվում զանազան օգտակար ձեռնարկութիւններին համար, ուրիմն պետա-կան զանաքանը շատ քիչ ծախսեր կան և տեղական միջոցները աւելի օգտակար կիրպոյ կը գործածվին։

Ներկայումս շատ հիմնարկութիւններ գո-յութիւն ունեն միայն զիրեկտորներին համար։ Գնացէք Թիֆլիս, կովկասեան թանգարանը և զուր գլխաւոր մուտքի դրան մօտ կը տեսնէք D-r Gustav Radde, թանգարանի զիրեկտորի հասցէն, որը շինութեան ամենալաւ բաժնի մէջ է բնակվում, իսկ թանգարանը պէտք է մտնել ետեւի մուտքով։ Գնալ լաւ է, որ շարքովայ մէջ գտնուի մի քանի անգամ թանգարանը բաց է լինում, իսկ գրադարանը ամբողջ ամառը փակված է լինում և այնտեղից ոչինչ տեղեկութիւն չէ կարելի ստանալ։ Բայց թանգարանը զննելուց յետոյ էլ ոչինչ օգուտ չէք ստանայ, որովհետեւ հանքային օրինակ-ները մարդու հասակից բարձր են դարձած, իսկ օրինակների տեղերը չեն որոշված։

Մինչև այժմ արած նուիրատուութեան քանակութեամբ Քութայիսին էլ Թիֆլիսից յետ չէ մնացել, այդ պատճառով աւելի լաւ է համալսարանի տեղը չը որոշել, մինչև այդ հարցը լաւ չը ընկնի, որովհետեւ Քու-

թայիսն էլ բաւական շատ յարմարութիւն-ներ ունի և մինչև անգամ մի քանի առա-ւելութիւններ Թիֆլիսից։

Հաւանալի է, որ բանալով կովկասեան համալսարան, պէտք է ձգտել, որ համալ-սարանին որքան կարելի է բնութագրով միջոց-ներ արդեն ծաղկելու համար։ Այդ պատճա-ռով պէտք է չը կրկնել այն սխալը, որ պատահեց Վարշավայի համալսարանի հետ, որ միայն անունով է համալսարան և շա-րունակում է մնալ միայն բարձր ուսումնա-րան։ Իմ կարծիքով Վարշավայի բարձր ուսումնարանը այժմեան համալսարանից աւելի մեծ առաւելութիւններ ունէր։ Այդ ուսումնարանի բոլոր ուսուցիչները հաւասար իրաւունքներ ունէին։ Նիթէ ցանկալի է բուն ուսուցիչան համալսարան, ուրիմն պէտք չէ օտարներին ընդունել, իսկ եթէ ընդուն-վում են և օտարները, պէտք է նրանց նոյն իրաւունքները տալ, ինչ որ ունեն ուսուցիչան խօսները։ Նիթէ հինգ տարեկայ ծառայութիւ-նը ունիլի աւելուածի իրաւունք է տալիս, հարկաւոր է, որ այդ իրաւունքը իրական լինի և ոչ թէ կախված լինի ղեկավորի ան-նական հայացքից։

Կովկասեան համալսարանի զլխաւոր բա-ժնիներէն մէկը անկասկած Ֆիզիկո-մատե-մատիկական բաժինը կը լինի։ Հէնց սկզբից հարկաւոր է նրան այնպիսի դրութեան մէջ դնել, որ կարողանայ ամենամեծ օգուտը տալ։ Այդ նպատակին զլխաւորապէս երկու միջոցներով կարելի է հասնել, բանալով Ֆիզիկո-քիմիական բաժին և ընդունելով ղեկավարն ուսումնարանների աշակերտներին գտնու Ֆիզիկո-մատեմատիկական բաժնի մէջ։

Ֆիզիկո-քիմիական մասը հասցնում է աւարականի աւելի խելացի բաժանմանը և միմեանց հետ կապ ունեցող գիտութիւն-ներին միացմանը։ Այդպիսի բաժնի կայ Խար-կովի համալսարանի մէջ։ Կիւրիի համալսա-րանը թէպէտ և խելացի թոյլութիւն միմիատրութեանից, բայց չը ստացաւ դա-նազան պատճառներով։

Նաց ուսումնարաններում ծառայողներից պահան-ջել միանուգ 35 բուրլի *):

Մտնել բոլոր եկեղեցիներում ուսումնարանաց անունով մշտադանձարան։ Պահանջել ամեն մի նո-րեկ մասն կամ աղջիկ ուսանողից 25 կոպ. Գիւ-րական ուսումնարաններում աւարտող ուսանողից պահանջել 30 կոպ., երբ սրա ուսանաւ աւարտե-լուն վկայական կը տրվի։ Քաղաքական երկսեռ ուսումնարաններում աւարտողներից պահանջել 1 բուրլ իւրաքանչիւրից։ Թեմական դպրոցներում իւրաքանչիւր ուսումնաւարտ ուսանողից վկայա-կան տարուց առաջ պահանջել 2 բուրլ։ Հոգեբա-կանաց ուսումնարաններում ուսումնաւարտ ուսա-նողից վկայական տալու ժամանակ պահանջել 3 ռ., իսկ երբ մի ուսանող, առանց ուսման ընթաց-քը աւարտելու, ուսումնարանից դուրս է ելում և կը ցանկալ վկայական ունենալ, թէ ինքը այս կամ այն դասարանի աշակերտ է եղել, այս դէպ-քերում պահանջել իւրաքանչիւրից, նայելով ո՞ր կարգի ուսումնարանի աշակերտ է, ուսումնաւարտ ուսանողների վկայականաց համար վերել նշանակ-ված գները կէսը։ Մասնաւոր դիւղական եր-կսեռ ուսումնարան բաց անող ուսուցիչից *) պա-հանջել ամենայն տարի, քանի որ ուսումնարանի գոյութիւնը չէ վերջացած, 120 բուրլ։ Քաղաքա-կան երկսեռ ուսումնարան բաց անողից էլ տա-րեկան 180 բուրլ պահանջել (Այս տեսակ մաս-նաւոր երկսեռ ուսումնարանների ուսումնական մասը տնտեսա-ուսումնական ժողովը աւանում է իր լիակատար իրաւասութեան տակ)։

Այս տեսակ աղբիւրները բաւական նշանաւոր գումարներ հետգնենէ կաղնկով, կարելի է ու-սումնարանաց ընդհանուր դրամագլխին կամաց կամաց անցնել։

Ուսումնարանաց ընդհանուր դրամագլխին ոչ մի-

*) Ուսուցչաց վկայականներ և դիւղական, քա-ղաքական և հոգեբանական ուսումնարանների մասին տես նախագծի յետագայ ուսումնական մասի մէջ։

*) Ուսուցչական վկայական ունեցողին միայն հարկաւոր է թող տալ մասնաւոր ուսումնարան բաց անել։

Բէյալական ուսումնարանները ծանր և ան-բարեկամ Հանգամանքներով են շրջապատ-ված։ Նրեում է, որ նրանք ժողովրդական լուսաւորութեան միմիատրութեան անհարա-դատ գաւառներ էին, էլ չենք խօսում, որ այդ ուսումնարաններից խլեցաւ գիմնալիա անունը, մեղալ ստանալու իրաւունքը և այլն։ Նրանք խկապէս այն էլ չէին, ինչ որ պէտք է լինէին սկզբնական նախագծին համեմատ։ Կլասիկական գիմնալիայից ղեա-լական ուսումնարանի համապատասխան դա-ստուն անցնելը առանց քննութեան, ղեա-լական ուսումնարաններին վատ աշակերտնե-րի հաւաքածու էր դարձնում։ Այսպիսի տեղափոխութիւն կարելի դարձնելու համար հարկաւոր եղաւ ղեկավարն դպրոցի IV դա-ստունը յարմարացնել կլասիկական գիմնա-լիայի նոյն դասատունը և այդպիսով չափա-զանց ծանրաբեռնել V դասատունը։

Բէյալական ուսումնարանների մէջ բացա-կայ են լրացուցիչ այն դասատուները, որ-տեղ սկզբնական նախագծին համեմատ պէտք է պատրաստվէին համալսարան մտնել ցան-կացող ղեկավարն ուսումնարանների աշակերտ-ները։

Հարկաւոր է ղեկավարն ուսումնարանների ուսումնական շրջանին մի տարի էլ աւելաց-նել և լրացուցիչ դասատան կուրսը բաժանել Խօթ տարիների վրա (ուսումնական ամբողջ շրջանի վրա) և ուսումը աշխուրթեամբ ուսումնարանները մտնել, այլ և համալսա-րանի Ֆիզիկո-մատեմատիկական բաժնից։

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ
12 յուլիսի
Ձեր պատուական լրագրի № 114 տպված էր մի-ուր Թմբուլ գիւղից, որպէս թէ իմ և թեմական տե-

ղէպըւմ պէտք չէ դիպել։ Իսկ սորանից ստաց-ված տոկոսների մեծ բաժինը գործածել դպրոց-ների ուսումնական մասի վրա, օրինակ ուսում-նարանական գործում ծառայողների ռոճիկները մատակարարել և դպրոցների ուսումնական պի-տոյքները հոգալ։ Իսկ ընդհանուր դրամագլխից ստացված տոկոսներ մի բաժին էլ յետագայ դպրոցների շինութեանց համար։ Երբ ընդհանուր դրամագլխի շահերը գործածվելու լինեն ուսում-նարանների տնտեսական և ուսումնական ապա-հովութեան համար, մեր կարծիքով, անհրաժեշտ հարկաւոր է այդ տոկոսների մի մասը յետ ձգել միայն և եթ մանկավարժական ապարիթում գոր-ծողների ապագան ապահովելու նպատակաւ, այ-սինքն կազմել մի տեսակ հասոյթի կասսա (пенсия-ная касса), որի կազմակերպութեան միւս զլխա-ւոր աղբիւրը կը լինի իւրաքանչիւր մանկավարժի ռոճիկի մի մասը անընդհատ պահանջելով։ Այս այս հասոյթի արկղից կը բաժանվեն ծառայողաց, նայելով նոցա պաշտօնավարութեան ժամանակա-միջոցին, պատկանելիք հասոյթները։ Հասոյթի արկղի հիմնը մեզ թուում է ուսումնարանի գը-լխաւոր բարենորոգումներից մէկը, վասն զի հայ-ուսուցչի վիճակը յարաւ և և հի մի ու ի ն կերպով ապահովելուց վերջը միայն կարելի է ար-ժանաւոր և իրանց գործին հմուտ դաստուներ գտնել։ Գուցէ այդ ամենահարկաւոր պայմանի բացակայութիւնից է զլխաւորապէս, որ մեր ու-սումնարանները զրկված են հմուտ մանկավարժ-ներից։ Իսկ եթէ վերոգրեալ ընդհանուր դրամա-գլխի շահերի մի մասից կարելի կը լինի կազմել անակնկալ ծախսերի համար մի արկղ էլ, այդ ա-ւելի լաւ, վասն զի այն ամեն կարելի է օգուտ քաղել այդ արկղից ամենայն դէպքերում, երբ աղքին յանկարծակի վրա է հասնում մի սոսկալի դժբախտութիւն, ինչպէս օրինակ այս տարեկայ սովը։ Նեղ օրով համար այս տեսակ մի մշտական աղբիւր ունենալը մասնաւոր հարկաւոր է հայոց ազգին անոր համար, որ մենք դառնալով Կործն-րով արդէն տեսնել, որ երբ Տաճկահայաստա-նում հարկերներով կորուրում են սովից մեր եղ-բայրները, ամեն ջանք գործ ղենուց էլ վերջը,

սուչ պ. Պաօշեանցի աշխատութեամբ նոյն գիւղի բնակիչ պ. Բաղալ Կոնստանտինացը կտակեց Նա-խիվանի երկսեռ դպրոցներին 5000 բուրլի, և ես և պ. Պաօշեանցը այդ կտակը հաստատեցինք։ Որովհետեւ այդ լուրի մէջ յիշվում է իմ անունը, արդարութիւնը երևան հանելու համար հարկաւոր եմ համարում գրել այդ մի քանի խօսքերը։ Ոչ ես և ոչ Պաօշեանցը ոչ մի աշխատութիւն չենք յան-ձրն առել համոզելու պ. Կոնստանտինացին կտակ անելու և չէինք կարող էլ կտակը հաստատել, որով-հետեւ առաքելայն ասում է զկտակ գլխի մահուան հաստատեցիւն իսկ պ. Կոնստանտինացը անցեալ 1879 ամի 7 յուլիսի առաջարկեց ինձ, ինչպէս տեղական նստաբլուրի, վաւերացնելու կտակը, որի մէջ նա նշանակեց Նախիվանի երկսեռ դըպ-րոցներին 5000 բուրլի, երեսուցեմայ ուրբ Զա-կուրայ դպրոցին 3000 բուրլի և սուրբ Ելմիածնի վանքին 100 բուրլի և այդ տեղեկութիւնները իր ժամանակին հրատարակվեցան «Մշակի» մէջ։

Աւելորդ չեմ համարում մի քանի խօսք հաղորդել պ. Պաօշեանցի Նախիվանի դպրու և տեղական դպրոցների վերաբերութեամբ կատարած կարգադ-րութիւնների մասին։ Անցեալ յունիսին պ. Պա-շեանցը շնորհ բերեց Նախիվանի և կամեցաւ յարու-թիւն տալ տղայոց մեռեալ դպրոցին, որը փակված էր հոգաբարձուների և վարժապետների մէջ ծագած զանազան անբաւականութիւնների պատճառով։ Իսկ այդ նորան չը յաջողվեց, որովհետեւ նա իր անհամբեր, անտեղի, անվայել խօսքերով հոգաբար-ձուաց նստի մէջ, անպատեհ մի քանի հոգաբար-ձուների, յարուց նոցա, վարժապետների և ժողո-ւրդի մէջ աւելի մեծ կոտակցութիւններ։ Զեռոյ փոշմանեց, և աշխատեց իր սխալ ուղղել, սկսեց քարոզներ կարգալ, խնդրել այս կամ այն պա-րոններին, որ մի ընդհանուր ժողով կազմեն, հա-յիւ առնեն հոգաբարձուներից, որոնք մեղաւորին և ուսումնարան փակողին, —այդ էլ չը յաջողվեց։ Վերջապէս կային, Զուրայի անէճը թափեց նախիվանցիների վրա ու հեռացաւ։ Այդ բոլոր խաղաղութիւններից յետոյ, օգուտ քաղելով հին հոգաբարձուների և վարժապետների հրաժա-րական տարուց, մի քանի ուսեալ երիտասարդներ երկսեռ դպրոցների ղեկը իրանց ձեռքը առին, աշակերտներին և աշակերտուհիներին աշխոյժ տալու և նոցա տարեկան աշխատութիւնը իմա-նալու համար նշանակեցին հարցաքննութիւններ և հանդիսաւոր կերպով ակտ կատարեցին։ Իսկ հի-մայ նոյն պարոնները ամեն կերպ ջանքեր և աշ-խատութիւններ գործ են դնում դպրոցների բա-րոյական և նիւթական դրութիւնը բարելաւաց-

դարձեալ չենք կարողանում ամենանուագ անգամ օգնութիւն հասցնել նոցա։

Ամենայն քաղաքի կամ գիւղի մէջ, ուր հիմն-ված է արդէն կամ որոշված է հիմնել մի որ և է ուսումնարան, անշուշտ հարկաւոր է գտնէ տա-րին մի անգամ հայ բնակչաց ձիւղ վիճակագրու-թիւնը անել և յետոյ ըստ այնմ ուսումնարանների թիւը աւելացնել կամ պակասեցնել։ Այս կերպով կունենայինք գտնէ Ռուսաստանի բոլոր հայ բնակ-չաց մատակարարալէս ձիւղ թիւը, որ մինչև այժմ անհնարին է կղած իմանալ։ *)

Կենտրոնական տնտեսա-ուսումնական ժողովը պէտք է ունենայ տպարան, բոլոր ուսումնարա-նաց համար ուսումնական պիտոյքների դեպօ և մի մանկավարժական շարքաթաթիթ, որով կարե-լի կը լինի ուսումնարաններին մի որոշ ուղղու-թիւն տալ։

Վերոգրեալից մենք հետեւեցնում ենք, որ բոլոր մեր ուսումնարանների շարքական և անշարժ կա-քերը մի ընդհանուր կենտրոնական տնտեսա-ու-սումնական ժողով իրաւասութեան ենթարկելուց վերջը և կազմելով մի ընդհանուր ուսումնարանա-կան դրամագլուխ հանդերձ հասոյթի և անակնկալ ծախսերի արկղերով, մենք համոզեալ ենք որ այդ կերպով միայն կարելի է մեր ուսումնարա-նների առաջին հիմքը, այն է տնտեսական մասը վե-րանորոգել և հաստատաւոր կերպով կազմակեր-պել։

(Կը շարունակվի)

*) Այս կարեւոր հարցի մասին «Մշակ» իր ան-ցեալ տարով համարներում մի քանի անգամ հը-րաւէրներ կարդաց, բայց ցուակալաբար անցան աւարարիւն։

ՄԱՄՈՒԼԻՆՍԿԻՅԵՐՈՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐՔԻՆ

11-20

Այն քանակը, որը երկու զորքից բաժնի համար համար համար է եկող ուսումնական տարուան համար ուսուցիչի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով: Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկու զորքների հոգաբարձուի մօտ:

Հոգաբարձուք { Մարգիս Միրզայեանց.
Եսատուք Իսահակեանց.

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԶՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱ-
ԻՑՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

ԱՌՆԵՏԻՄԱԿԱՆ ՏՈՒՆ ԵՂՈՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՒ ԸՆԿ. Երայնում այդ առևտրական տան զործերով բոլոր հետաքրքրվածներին, որ զործերի ընդարձակվելը պատճառով այդ տան գլխավոր գրասենյակը օգոստոսի 1-ին (ը տեղագրված) Գժակելի տա վերին յարկ Գանձակապա փողոցի ե Նրիվանակապ հրապարակի անկիւնի վրա: Տուրքում տարւ ե մուտքերի տեսակով համար գրասենյակի հրապարկ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 ե 2 փոխառութեան տոմսակներ ե ծախում է նրանց այն պայմանով որ զինք 12 ամիսները ընթացքում հաստցանալին: Այդ պայմաններով մի տոմսակ զնոյր տարեկա ընթացքում մասն ունի տարածվալին 20 հազարներին, որոնք ջնջ են տրված վիսպական ձևը չոր տիրաւորներին: Յանձնարարութեամբ զնում է ե ծախում է մասնաւոր անձանց ամեն տեսակ առնարժ կաշւեր, կովի սխալով ծախում է ապրանքներ ե նրիվներ: Ծախում է տպված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ ե դատարկ տեղեր քրէհով տալով համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է:

1) Պահելու համար մինչև պահանջերը $4\frac{1}{2}\%$, պայմանաւոր $5\frac{1}{2}\%$, 2) տուրքերին (ամսով $5\frac{1}{2}\%$, 9 ամսով $6\frac{1}{2}\%$, 1 տարով $7\frac{1}{2}\%$) $1\frac{1}{2}\%$ տարով $8\frac{1}{2}\%$, 2 տարով $9\frac{1}{2}\%$, 3) Այլ ընկերութեան 1 կազմի պայ ունեցողներին մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9% Պարտաւոր հակով յայտնի անձի պահանջով թեւաբան փող տալու ժամանակ առնուած է մամուլ ժամանակով 10% , մի շարքի ժամանակով 9% ։

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենտի կառավարչից։

6-10 (2)

Միջին այս ԱՄՍՄԱՍՑ ՎԵՐՋԸ ԱՆ-
ԼԱԿԱՄԸ ԽԱՆԻՌԻՈՒՄՄ ԱՐԾՐՈՆՈՒ զա-
րէի մէջ: Գուպաներ (տղամարդկեանց
կանանց), Թաշկինախներ, պարուսխնա,
հանախներ, հոտաւէտ շրեր, հրացաններ,
էփօրկներ, հոգւէքներ, պոցներ, դա-
սիներ, գաւներ, ցիարատ-մազնիզիա
արաւից և այլն. այժմ ծախսուի մէ
50%—500% էժան քան թէ ուրիշ տեղի:
8—10

Համեմատողէ՛ք անգլիական խանութի թէ՛ յի գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆունտի Համար այն թէ՛յերի հետ, որոնք ուրիշ խանութեա՛րում 300%-ով թանկ են ծախվում և այդ խանութի ֆունտը2 բաբլիանոց թէ՛յը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէ՛յի հետ:

37—100

Ազգային ընտանեկան աշխարհք. 1-ին տարուայ ուսմունք, և ներթրեցմունք, առաջին տղազորու-
թեամբ:

Նա հասկանալի անաշխարհք
և հայրենիք. Յդ. տարտալ ուս-
մունք և ընթերցմունք, երկրորդ ար-
պարու թեամբ:

4—5

Հին դշաբթի, Վոթով վհենքական ե
բողաղի Հ., Բոտինեանց կանանց ե. երե-
կաների Հ., Լիսիցեվե Վ. Բոթիշեվ
ներքին Հ., Գիւլարեանց սիֆիրիսի ե.
սեռական օրգանների Հ.:

Աւարաթ. Դավթոնսի կանանց Հ.,
Բիկեղի խրատըխան Հ., Կրասնո-
գլենազովի Լիսիցեի ներքին Հ., Բա-
րուռում մանրագործական, կանանց ե-
րկիսնորի Հ., Շաէլմբորցի եւ Աստ-
վաճառուբով վաճառական եւ կառչ Հ.,
Բարաւով ջրային եւ ներքին Հ.:

Շաբաթ Լիսիցե վ. և Վերմիշե վ.
ներքին Հ., Բաբով կուրծքի Հ., Եանկո-
վսկի վաներական և կաշու Հ.:

Բացի այդ բժիշկ Վ. ԳՕՐՕՎ բժշկանոցի մեջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբանյան Հորեքչաբեթի օրերը առաւօտեան Ծից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին

էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվա-կայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրէխտ աղքատ Հիւան-
դներին բժշկանոցի տոմսակով ընդունում է
ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առա-
ւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է
մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու

Բժշկանոցի գերեկտօր Լիսինցեյ:

Բժշկանոցի գիրեկտոր Լխսիցեյ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՔԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները եւ նորիկների ընդունելութիւնը տղայացի եւ օրիորդաց 4—15 տարեկան Տասակը:

ՏԱՐՔԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՅՈՒՆԵՒՈՒԷ ՊԱՆՏԻՍՈՆ ՈՒՐ ԿԸՆԳՈՒՆԱԿՆԵՆ ԳԻՇՇԵՐԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇՇԵՐԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Միլիմանեանց

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱԿԱՅՍՍ ՊԵՆՏԵՐՆԻՍ
ՅԻՆ ԿԻՉ ԿԸ ԲԱՅՉԻՆ ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտե
Կարելի կը լինի ստանալ ԿԱՅԷ, ԵՐՈՂԱԿ
ԹԷՑ և պատրաստված Հանքային զանազա
ԸՐԻՆ: 27-40

Հայրոց ծխական և մանկադու ուսումնադարձնե-
րում 8-ՏԱՐԻ դասախօսութիւն պարծ մ-
երԻՏԱՍԱՌԻ ներկայ սեպտեմբերի 1-ից յան-
կանում է ՈՒՍՈՒՅԶԻ ՊԱՇՏՈՆ ստանալ բա-
ցառապէս ՌՈՒՍԱՅ լեզուից և ԹՈՒՄԱՆՆՈՒ-
ԹԵՆԻՅ, ինչպէս Թիֆլիսում նոյնպէս և զա-
ւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կամ
ԷՆՇԻԿԱՆՃԵՆՆԵՐԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՆԵՐՈՒՄ:

3 — 22

ՄԻՆԱՍ ԳԻՒԼՁԱՏԱՆ, որ կանտոնայ ունի
ՓԱՐԻՁ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ
ԱՌՇԵՐՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՐ-
ՄԻՍ Ի Ց Ո Վ կատարելու անպայադ, ամե-
նայն ճշտութեամբ, և դիմում է պ. պ. վա-
ճառարաններին, առաջարկելով իր ծառայու-
թյունը:

2-5